

ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ
„REVUE DES ETUDES ARMENIENNES“ ՀԱՆԴԵՍԻՆ

«Հանդես հայագիտական ուսումնասիրություններու» («Revue des études arméniennes») պարբերաթերթը, հիմնված 1920-ին Ա. Մեյեի և Ֆ. Մակլերի ձեռքով, դադրեցավ հրատարակությունը 1933, թողլով պարապ մը, զոր ոչ մեկ այլ հրատարակություն հաջողեցավ լեցնել։

Հաճույքով տեղեկացանք, թե Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության առատաձեռն աջակցության շնորհիվ, «Հայագիտական ուսումնասիրություններու հանդես»-ը պիտի վերածնի նոր ձևի մը տակ և նյութական պայմաններու մեջ, որոնք կապահովեն կանոնավոր հրատարակություն մը բազմաթիվ տարիներու համար։

«Հանդես»-ը պիտի ունենա խմբագրական մարմին մը, ուր ներկայացված են հայագիտության զանազան մարզերը, ինչպես և զանազան մշակույթներ, որոնցմով հյուսված է Հայաստանի պատմությունը։ Խմբագրական մարմինին կանդամակցին պր. պր. Ե. Բենվենիստ, Կ. Գահեն, Մ. Գանարդ, Ժ. Դյումեզիլ, Ա. Դյուբոն-Սոմմեր, Ֆ. Ֆրեյդի, Ա. Կրապար, Պ. Լեմիրլ, Շ. Մերսիե, Ա. Միրամբել, Լ. Ռոբեր։

Խմբագրության քարտուղարն է պր. Հայկ Պերպերյան, 10 Bd. Delessert, Paris (16)։

Կառաջադրենք 1963-ին հրատարակել «Հայագիտական ուսումնասիրություններու» նոր շարքին առաջին հատորը։

«Հանդես»-ը լայնորեն տրամադրելի է բոլոր երկիրներու գիտնականներուն, պիտի հրապարակե գիտական հոդվածներ, ուսումնական ամեն ճյուղերու վերաբերյալ, լեզվագիտություն և բանասիրություն, պատմություն և հնագիտություն, ընկերաբանություն և ազգագրություն, ամենեն տարածուն և միևնույն ատեն ամենեն հասկնալի հեռապատկերի մը մեջ, ընդգրկելով հարաբերությունները հայկական մշակույթին՝ դրացի երկիրներուն հետ։

Լայն տեղ պիտի տրվի Հայաստանի մեջ կատարված աշխատանքներու թարգմանության, որոնք, այլապես, անմատչելի կմնան Արևմուտքի բազմաթիվ գիտնականներու։ Զանազան ուսմանց զարգացման մասին ընդհանուր ակնարկներ, գրախոսական ցուցակներ և ժամանակագրություններ պիտի ավելնան հոդվածներուն և ինքնագիր ծանոթագրություններու վրա, որոնք կրնան ընդգրկել քարտեզ և նկար։

Ուրախ պիտի ըլլանք ունենալով Ձեր ալ աջակցությունը, խնդրելով նույնպես, որ ներկա հայտարարությունը հանձնեք Ձեր ընթերցողներու գիտության։

Խմբագրական մարմնի կողմե
տնօրեն
Ե. ԲԵՆՎԵՆԻՍՏ

Փարիզ,
հոկտեմբեր 1962